

Նյու Յորքում ստեղծվել է «Կանանց ՄԱԿ»



ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի անդամները կողմ են քվեարկել կանանց իրավունքների պաշտպանությանը հետևող նոր, ավելի ազդեցիկ գործակալություն հիմնելու որոշմանը: Երեք տարվա քննարկումների ընթացքում որոշվեց գործող չորս գործակալություններից հիմնել հինգերորդը, որն արդեն անվանակոչել են «Կանանց ՄԱԿ»: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը մեկ տարվա ընթացքում պետք է նախագիծ պատրաստի, որում կճշտվեն գերատեսչության նպատակներն ու խնդիրները, նրա կառուցվածքը, ֆինանսավորումն ու ղեկավար կազմը:

Նշենք, որ ներկայումս կանանց հիմնախնդիրներով զբաղվող կառույցները ՄԱԿ-ի մյուս գործակալությունների համեմատությամբ ունեն փոքր բյուջե և ազդեցության ոլորտ: Գոյություն ունեցող չորս կառույցներից ամենախայտնի են ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամն է, որը սուբսիդավորվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրից (UNDP):

Թուրք կանանց պատվիրակությունը Հայաստանի խորհրդարանում

Նոյեմբերի վերջին Թուրքիայից ժամանած գիտական մտավորականության և գեներալային խնդիրներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունն այցելել է Ազգային ժողով՝ հայ կին խորհրդարանականների հետ քննարկելու կանանց հիմնախնդիրներին ու եվրախնդիրներին գործընթացին առնչվող հարցեր: Պատվիրակության հետ զրույցի ժամանակ կին պատգամավորները հույս հայտնեցին, որ նման հանդիպումները հնարավորություն են ընձեռնում ավելի լավ ճանաչելու մեկը մյուսին և աջակցում են հայթուրքական երկխոսության ակտիվացմանը: Հանդիպումն անցկացվեց «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի «Եվրախնդիրները և գեներալային հիմնախնդիրները» ծրագրի շրջանակներում:

Շվեյցարիայում երեք քարծրագույն պետպաշտոններում կանայք են



Շվեյցարիայի խորհրդարանի վերին ու ստորին պալատների խոսակների պաշտոնում նույնպես ընտրվել են կանայք՝ Երիկա Ֆրոսթեր-Վանինգհայն և Պասկալ Բրուդերերը: Նշենք, որ Շվեյցարիայում կանայք մինչև 1971 թվականը իրավունք չուներին մասնակցելու համազգային ընտրություններին:

Շվեյցարիայի խորհրդարանի վերին ու ստորին պալատների խոսակների պաշտոնում նույնպես ընտրվել են կանայք՝ Երիկա Ֆրոսթեր-Վանինգհայն և Պասկալ Բրուդերերը: Նշենք, որ Շվեյցարիայում կանայք մինչև 1971 թվականը իրավունք չուներին մասնակցելու համազգային ընտրություններին:

Նախընտրված քարտեզային անություններ

«Նա մինչև օրս չի ներել ինձ դրա համար»...



Էջ 3

Անվճար հավելված

Նոյեմբեր-դեկտեմբեր, 2009



Ինչի՞ց է սկսվում խարականությունը

Այս հարցին առաջին անգամ անդրադարձավ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, որն ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ուղիղ երեսուն տարի առաջ՝ 1979-ի դեկտեմբերի 18-ին: Կոնվենցիայի որոշ դրույթներ, հատկապես սեռի հատկանիշով խտրականության բացառման սկզբունքը, ընդգրկվեցին աշխարհի բազմաթիվ երկրների սահմանադրություններում: Հայաստանը, ինչպես հայտնի է, վավերացրել է կոնվենցիան 1993-ին, իսկ բոլորովին վերջերս՝ 2008-ին Ազգային ժողովը հավանություն տվեց նաև նրա Կամընտիր արձանագրությանը, որը հնարավորություն է տալիս մասնավոր անձանց կամ կազմակերպություններին կոնվենցիայով պաշտպանված իրավունքների խախտման մասին գանգատներ ներկայացնել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե:

Երեսուն տարի ընդդեմ կարծրատիպերի ու խտրականության դեմ պայքարած Կոնվենցիայի առկայության դեպքում համաշխարհային հանրությունը շարունակում է մտահոգված մնալ նույն այդ խնդրով: Թեև առաջընթացի լիակատար բացակայության մասին խոսելն անարդար կլիներ նախաառաջ բուն կոնվենցիայի նկատմամբ: Չէ՞ որ նրանում, որ աշխարհը, այնուամենայնիվ, փոխվում է դեպի լավը և առաջին հերթին իշխանությունում կանանց ներկայացվածության իմաստով, անկասկած զգալի է նաև նրա ավանդը: Այլ հարց է, որ փոփոխությունները խիստ դանդաղ են տեղի ունենում: Առաջին հերթին դա վերաբերում է կանանց առաջընթացը խոչընդոտող սոցիալ-մշակութային կարծրատիպերի հաղթահարմանը, ինչը, ի դեպ, կոնվենցիայի դրույթներից մեկն է: Հենց այս մտտեցմամբ է նա տարբերվում կանանց իրավունքներին առնչվող ավելի վաղ ընդունված միջազգային բոլոր փաստաթղթերից:

Կոնվենցիան առաջինն էր, որ մատնանշեց այն «նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացման» անհրաժեշտությունը, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ անարդարության վրա:

Ըստ էության, կոնվենցիան առաջարկեց չսահմանափակվել միայն իրավունքի հարցերով, այլ բացահայտել այդ իրավունքների խախտումների ակունքները և ձեռնարկել համապատասխան քայլեր տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական ու մշակութային մոդելները փոխելու համար: Չէ՞ որ կարելի է ընդունել որքան ուզեք լավ և արդարացի օրենքներ սեռերի հավասարության վերաբերյալ, սակայն դրանցից ոչ մեկը չի գործի, քանի դեռ հասարակությունում պահպանվում են կնոջ դերի ու տղերի մասին կարծրատիպային պատկերացումները, որոնք սահմանափակում են նրա լիարժեք մասնակցությունը քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքում:

Հասկանալի է, որ այս հարցում չարժի արագ արդյունքներ ակնկալել: Այդուհանդերձ, չարժի նաև հույս ունենալ, որ ժամանակի ընթացքում ամեն ինչ ինքնուրույն կհարթվի: Ի դեպ, կոնվենցիայի գլխավոր առանձնա-

հատկությունն այն է, որ այն հնարավորություն է չի տալիս երկրներին և կառավարություններին զտնվելու սպասողական վիճակում: Նրանում անբազրկված պետությունների պարտադիր և պարբերական հաշվետվության մեխանիզմը (չորս տարին մեկ անգամ) հնարավորություն է տալիս Կոնվենցիայի կոմիտեին մշտադիտարկման ռեժիմով հետևելու նրա կատարմանը:

Այս համատեքստում գլխավոր խնդիրը, որն այսօր խոչընդոտում է կոնվենցիայի իրագործումը Հայաստանում, այն է, որ հասարակությունում բացակայում են «կանանց խտրականություն» երևույթի ընկալումն ու գիտակցումը: Չեն գիտակցում նաև հենց իրենք կանայք: 2008-ին Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի անցկացրած «Որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության մասին» հետազոտության համաձայն կանանց խտրականության ակտիվությունն ընդունող հարցվածների թիվը չի գերազանցել 28%-ը: Հարցվածների կեսից ավելին պնդել է, որ երբեք չի բախվել կանանց խտրականությանը, իսկ 22%-ը՝ ընդհանրապես չգիտի խոսքն ինչի մասին է:

Պատկերը փոխվում է, երբ հետազոտողները հարցն այլ կերպ են ձևակերպում. արդյո՞ք հավասար են տղամարդկանց ու կանանց հնարավորությունները ծառայողական առաջխաղացման կամ սահմանադրական իրավունքների իրականացման գործում: Այս հարցարձանն ղեկավարող հարցվածների արդեն 62%-ն ընդունում է, որ տղամարդկանց հնարավորություններն ավելի շատ են: Դրա հետ մեկտեղ 30-34%-ը համոզված է, որ մեզանում կանանց ու տղամարդկանց հնարավորությունները հավասար են: Սակայն ամենահետաքրքիրն այն է, որ, այդուհանդերձ, հարցվածների 80%-ը համարում է, որ որոշումների ընդունման մակարդակում կանայք շատ քիչ են:

Այս բոլոր տվյալներն ուղղակիորեն առնչվում են կոնվենցիայի 1-ին հոդվածին և վկայում այն մասին, որ հասարակության մեջ չկա «կանանց խտրականություն» եզրին համապատասխանող ըմբռնում, և, համապա-



Խտրականությունն սկսվում է լուռ համաձայնությունից...

Լուսանկարը՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի

տասխանաբար՝ բացակայում է այս երևույթի գիտակցումը: Կնշանակի՝ չկան նաև սեփական իրավունքները պաշտպանելու փորձեր:

Բավական տարածված են մեր հասարակության մեջ կնոջ տեղի ու դերի մասին կարծրատիպային պատկերացումները: Հարցվածների 46%-ը, որոնք համաձայն են «Քաղաքականությունը կնոջ գործն է» դիրքորոշմանը, այս կարծրատիպի լուրջ ուժի վկայությունն են: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս կարծրատիպին հարող հարցվածների 40%-ը կանայք են: «Կանայք իրենք են խտրականության ենթարկում կանանց: Խտրականության են ենթարկում անվստահությանը: Այս անվստահության վրա է կառուցվում տղամարդկանց գերակայությունը քաղաքականության մեջ ու իշխանությունում», - կարծում է Հանրային խորհրդի գեներալային քաղաքականության և ժողովրդագրության հարցերի համաձայնողի նախագահ Ելենա Վարդանյանը:

Հայ հասարակությունում գեներալային կարծրատիպերի ու սեքսիզմի

դրսևորումների լայն տարածվածության պարագայում դժվար թե կարելի է պնդել, որ պետությունը քայլեր է ձեռնարկում դրանց հաղթահարման ուղղությամբ: Հատկանշական է, որ պաշտոնական պատվիրակության ղեկավարը, վերադառնալով ժնկում կայացած փորձագետների կոմիտեի 43-րդ նստաշրջանից, որում լսվել էր Հայաստանի պարբերական գեկույցը կոնվենցիայի կատարման մասին, հայտարարեց նամուլում. «Հայաստանում չկան օրենքներ, քաղաքականություն կամ այլ պրակտիկաներ, որոնց համաձայն կանայք խտրականության են ենթարկվում»:

Իսկ գուցե արժի՞ անդրադառնալ Կոմիտեի փորձագետների կողմից արված եզրակարգի հանձնարարականներին և փաստել, որ մեր երկրում, ցավոք, գոյություն ունեն կանանց խտրականության բոլոր ձևերը: Պարզապես մենք չենք կարողանում կամ չենք ցանկանում դրանք տեսնել...

Թամարա Գովաթյան

Թեմայի շարունակությունը՝ էջ 2

«Նա/Նե» լրագրողական մրցույթ



Բրիտանական խորհուրդը՝ ԳԳ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանության կողմից ֆինանսավորվող «Wo/men in Politics» ծրագրի շրջանակներում, և ԵԱԿԿ Երևանյան գրասենյակը հայտարարում են «Նա/Նե» լրագրողական աշխատանքների մրցույթ: Հայտերը ընդունվում են մինչև 2009 թ. դեկտեմբերի 31-ը:

Մանրամասն տեղեկությունների համար այցելեք Բրիտանական խորհրդի վեբ կայք www.britishcouncil.am կամ զանգահարեք 56 99 23 (մերքին 123) հեռախոսահամարով՝ ծրագրերի օգնական Արմինա Մխիթարյանին:



ՄԱԿ-ի օրացույց

Պաշտպանել բազմազանությունը, վերջ տալ խտրականությանը

Սա է դեկտեմբերի 10-ին նշվող մարդու իրավունքների պաշտպանության օրվա թեման այս տարի

«Խտրականությունն ուղղված է առանձին անձանց ու խմբերի, որոնք խոցելի են հարձակումների առաջ հաշմանդամ մարդիկ, կանայք ու աղքատներ, աղքատներ, փախստականներ, փոքրամասնություններ և բոլոր նրանք, ովքեր համարվում են «ուրիշ»... Սակայն խտրականության այս գոհերը միայնակ չեն: ՄԱԿ-ը սատարում է նրանց...», - ասվում է Մարդու իրավունքների օրվա առնչությամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղերձում:

«Ո՛չ» ասե՛ք ՁԻԱԳ-ին


Դեկտեմբերի 1-ը ՁԻԱԳ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է: Այս տարի օրվա թեման է՝ «Համընդհանուր մատչելիություն և մարդու իրավունքներ»



Առողջ պահպանության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ներկայացրել է նոր հանձնարարականներ ՄԻԱՎ-ի փոխանցումը մոռցնելու և բերի մորթիների վարակվելու ռիսկի 5%-ով նվազեցմանը: ՄԱԿ-ի տվյալներով՝ այսօր աշխարհում հաշվվում է 33.4 մլն ՄԻԱՎ վարակակիր մարդ, որոնցից 15.7 միլիոնը՝ կանայք են, 2 մլն երեխաներ: Անցյալ տարի ՁԻԱԳ-ից մահացել է 2 մլն մարդ, ինչպես նաև ծնվել են 430 հազ. ՄԻԱՎ-վարակակիր փոքրիկներ: ՁԻԱԳ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալներով՝ Հայաստանում արձանագրված ՄԻԱՎ-վարակակիրների թիվը 1988 թվականից մինչև 2009 թ. դեկտեմբերի 1-ը կազմել է 808 մարդ, որոնցից 218-ը՝ կին և 16 երեխա: Կենտրոնի տնօրեն Սամվել Գրիգորյանի խոսքով՝ 50% դեպքերում ՄԻԱՎ վարակը փոխանցվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 41.2% դեպքերում՝ թմրամիջոցների ներարկումների միջոցով: ՄԻԱՎ-ՁԻԱԳ-ի իրավիճակի գնահատումը ցույց է տալիս, որ հաշվարկային տվյալներով՝ Հայաստանում կա 2300 ՄԻԱՎ-վարակակիր:

Թրաֆիքինգ՝ ստրկություն 21-րդ դարում

Դեկտեմբերի 2-ը ստրկության դեմ պայքարի միջազգային օրն է



Աշխարհում ժամանակակից ստրկության ստույգ թիվը հայտնի չէ: ՄԱԿ-ի տվյալներով՝ աշխարհում 12 մլն մարդ ապրում է ստրկության մեջ: Սակայն բազմաթիվ փորձագետներ այս տվյալները համարում են միայն սառցակառքի գագաթը: Նրանց հաշվարկներով՝ ստրկության ժամանակակից ձևերի զոհ են դարձել ավելի քան 200 մլն մարդ: Համեմատության կարգով, 400 տարվա ընթացքում Աֆրիկայից Ամերիկա է բերվել ընդամենը 12 մլն ստրկ: Եվրոպայի տվյալներով՝ մարդկանց առևտուրն ամեն տարի անդրազգային հանցավորությանը բերում է 19 մլրդ դոլարի շահույթ: ԱՄՆ պետդեպարտամենտը պնդում է, որ նրա եկամուտները հասնում են տարեկան 32 մլրդ դոլարի: Ժամանակակից ստրկության մեծ մասը կանայք և երեխաներ են:

Ձեզ առաջարկում են լավ աշխատանք արտասահմանում

Կանգ առե՛ք և մտածե՛ք... Հայաստանը համարվում է կանանց ու աղքատների թրաֆիքինգի սկզբնաղբյուր՝ նրանց հետագա սեռական շահագործման նպատակով (մեծ մասամբ՝ ԱՄՆ-ի, ԱՄԷ-ի և Թուրքիայի ուղղությամբ), իսկ որոշ աստիճանով նաև տարանցիկ երկիր և վերջնական նպատակակետ: Նման եզրակացության են հանգել անցյալ տարի ԱՄՆ պետդեպարտամենտի գեկույցի փորձագետները՝ գնահատելով աշխարհում թրաֆիքինգի իրավիճակը: 2009-ի գեկույցում արձանագրվել է որոշ առաջընթաց, և նշվում է, որ Հայաստանը, չորս տարի շարունակ գտնվելով երկրորդ խմբի հատուկ վերահսկվող ցուցակում, տեղափոխվել է ամենաբարձր երկրորդ խումբ: Սա նշանակում է, որ թեև երկիրն ամբողջությամբ չի համապատասխանում թրաֆիքինգի դեմ պայքարի նվազագույն չափանիշներին, կառավարությունն այս ուղղությամբ ձեռնարկում է լուրջ քայլեր, մասնավորապես՝ նկատի է առնվում Թրաֆիքինգի հարցերով խորհրդի ստեղծումը, թրաֆիքինգի գոհերի աջակցության ազգային մեխանիզմի մշակումը և այլ միջոցառումներ:

Թրաֆիքինգի գոհերի օգնության թեժ գիծ՝ 080 080 801 կամ 0800 50 558
Այցելե՛ք կայքեր՝ <http://antitrafficking.am/>, www.stopchildtrafficking.am



Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մասնակից 185 պետություններից յոթը քաղաքացիները չորս տարի մեկ անգամ հաշվետու է լինում նրա կատարման մասին Կոնվենցիայի կոմիտեի առաջ: 23 փորձագետներից կազմված այս կոմիտեն, բացի կառավարության ներկայացրած գեկույցից, քննարկում է նաև այլընտրանքային ու սովորական գեկույցներ, որոնք, որպես կանոն, պատրաստում են տվյալ երկրի հասարակական կազմակերպությունները կամ փորձագետների խմբերը: Այս տարվա հունվարին կոմիտեի ժնևում անցկացված 43-րդ նստաշրջանի ընթացքում, բացի կառավարության կողմից պատրաստված գեկույցից, քննարկվեցին ևս երկուսը՝ Համալսարանական կրթությամբ կանանց ստացիայի փորձագետների խմբի հեղինակած այլընտրանքային գեկույցը և Կանանց համահայկական միության պատրաստած սովորական գեկույցը: Ավելի քան երեք ժամ էր հասկացվել էր այս կազմակերպություններին:

Կառավարությունն ու խորհրդարանն առայժմ լռում են

1993-ին վավերացնելով կոնվենցիան Հայաստանն ըստ էության այն դարձրեց իր ազգային օրենսդրության մի մասը, ինչպես նաև պատասխանատվություն ստանձնեց իր կողմից ներկայացվող հաշվետվությունների հետ կապված հանձնարարականների կատարման վերաբերյալ: Այս տեսանկյունից միանգամայն անհասկանալի է, թե ինչու մինչև հիմա, իսկ արդեն անցել է փաստորեն մեկ տարի, ոչ Հայաստանի կառավարությունը, ոչ Ազգային ժողովը որևէ կերպ չեն արձագանքել Կոնվենցիայի կոմիտեի կողմից արված առաջարկություններին: Ստահուգում է այն փաստը, որ որոշ առաջարկություններ և նտահոգություններ կրկնվում են յուրաքանչյուր հերթական հաշվետվությունից հետո: Օրինակ՝ շարունակ խոսվում է իշխանական կառույցներին ու հանրային ծառայողներին առաջարկությունների բովանդակությանը ծանոթացնելու մասին, սակայն ոչ ոքի, այդ թվում նաև՝ զանգվածային լրատվության միջոցներին դրանց մասին ոչինչ հայտնի չէ: Ավելին՝ առաջարկություններում խոսվում է նաև պետության կողմից գեներալային քաղաքականության հայեցակարգի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների երաշխավորման մասին օրենքի ընդունման անհրաժեշտության մասին: Թե՛ հայեցակարգը և թե՛ օրենքը ՄԱԿ-ի ճարգացման ծրագրի աջակցությամբ արդեն իսկ մշակվել են Աշխատանքի և Սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից, անցել միջազգային փորձաքննություն, սակայն մինչև հիմա չեն ընդունվել: Այս իմաստով հանրային հատվածում ավելի գործունակ է ժնևից վերադառնալուց հետո մեք պատրաստել ու հանրապետության մարզերում տարածել ենք «Կանանց երկխոսություն» լրատուի հատուկ թողարկում, որում ներկայացրել ենք Կոմիտեի կողմից արված դիտարկումները: Վերջերս Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ և մեր ստացիայի նախաձեռնությամբ անցկացվեց համաժողով, որում քննարկվեցին այդ հանձնարարականների իրականացման հետ կապված հիմնախնդիրներ: Համաժողովին, ի դեպ, մասնակցում էին կառավարության և խորհրդարանի ներկայացուցիչներ, սակայն առայժմ այս կառույցների կողմից ոչ մի տեղաշարժ չի նկատվում: **Ջենմա Հարությունյան**
Համալսարանական կրթությամբ կանանց ստացիայի նախագահ



ժնև 2009
Գլխավորում ենք հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների երաշխավորման մասին օրենքի ընդունման անհրաժեշտության մասին: Թե՛ հայեցակարգը և թե՛ օրենքը ՄԱԿ-ի ճարգացման ծրագրի աջակցությամբ արդեն իսկ մշակվել են Աշխատանքի և Սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից, անցել միջազգային փորձաքննություն, սակայն մինչև հիմա չեն ընդունվել:

Կանայք «սոցիալական հաշմանդամ» չեն

Կոմիտեն բազմիցս իր նտահոգությունն է հայտնել մեր երկրում կանանց խտրականության հարթահարման և գեներալային հավասարության ապահովման ազգային մեխանիզմի բացակայության առնչությամբ ու խորհուրդ տվել Հայաստանի կառավարությանը ստեղծել նման մեխանիզմ: Կառավարությունը, ի դեպ, մի շարք փաստաթղթերում ընդունում է կանանց իրավունքների ու գեներալային հավասարության խնդիրներով զբաղվող պետական մարմին ստեղծելու անհրաժեշտությունը: Սակայն մյուս կողմից՝ պնդվում է, որ մեխանիզմն ստեղծված է՝ ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության, և հենց նա էլ ապահովում երկրում գեներալային հավասարության քաղաքականությունը: Այլընտրանքային գեկույցի պատրաստման ժամանակ մեր կողմից անցկացված մոնիթորինգը հերթական անգամ ցույց տվեց, որ Հայաստանում չկա մի կառույց, որը համապատասխաներ ազգային մեխանիզմի չափանիշներին և համակարգեր գեներալային հավասարության քաղաքականությունը: Նման կառույցը պետք է ստեղծվի առավելագույն բարձր մակարդակի վրա և ղեկավարվի նախարարների կաբինետի անդամ կողմից, օժնված լինի համապատասխան իշխանական լիազորություններով և իրավասությամբ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում առանձին վարչությունը նման լիազորություններ և իրավասություն չունի: Ու ոչ միայն այն պատճառով, որ կանայք «սոցիալական հաշմանդամ» չեն, և նման մոտեցմամբ գեներալային հավասարության հասնելու փորձերը, մեր կարծիքով, անարդյունավետ են: Համակարգող կառույցի իդեալական տարբերակ կարող էր լինել գեներալային հավասարության նախարարությունը, թեկուզև շատ փոքր: Սակայն հաշվի առնելով լրացուցիչ ֆինանսավորման հետ կապված խնդիրները, կարծում ենք, որ համակարգում կարող է հաջողությամբ կատարել տարածքային կառավարման նախարարությունը, որը իր բնույթով առավելագույն է կապված հանրապետության մարզերի և համայնքների հետ: **Վլադիմիր Օսիպով**
Փորձագետ, ՀՀ ՊԱՄ փոխտնօրնային և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Դե՛ յուրե՛ն – դե՛ ֆակտո՛՛ զգա՛նք Կառավարությունը

Կանանց անբավարար ներկայացվածությունը քաղաքական և տնտեսական որոշումների կայացման մակարդակում Կոմիտեի հանձնարարականներում արտացոլված գլխավոր հիմնախնդիրներից է: Նշելով մեր կանանց բարձր կրթական մակարդակը՝ Կոմիտեի փորձագետներն ամբաբար խորհուրդ տվեցին հայտնել նրանց ցածր մասնակցությունը խորհրդարանում, կառավարությունում, տեղական իշխանություններում: Եզրափակիչ դիտարկումներում ՀՀ կառավարությանը, մասնավորապես, առաջարկվել է արագացնել ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու գործընթացը՝ բարձրացնելով կանանց համար 15-տոկոսանոց քվոտան 20 տոկոսից ավելի մակարդակի: Առաջարկվել է լիովին արդարացված է, քանի որ մեզանում տղամարդկանց ու կանանց մեկնարկային հնարավորությունները անհավասար են և դրանց հավասարակշռման միակ միջոցը ժամանակավոր քվոտաներն են: Խոսքն այստեղ իրավական հավասարության մասին չէ, այլ հավասար հնարավորությունների և հավասար արդյունքների: Կոնվենցիայի տեքստում հատուկ ընդգծվում է, որ պետությունը, վավերացնելով այն, պատասխանատվություն է կրում խտրականության ոչ միայն դեռ յուրե՛ն, այլև դե՛ ֆակտո վերացման համար, և պարտավոր է հատուկ մեխանիզմների ու ինստիտուտների օգնությամբ դրա համար ճանապարհ հարթել: Իր հանձնարարականներում Կոմիտեն կոչ է արել ավելի վճռակամորեն պայքարել մեր երկրում լայնորեն տարածված



ժնև 2009
Կրում խտրականության ոչ միայն դեռ յուրե՛ն, այլև դե՛ ֆակտո վերացման համար, և պարտավոր է հատուկ մեխանիզմների ու ինստիտուտների օգնությամբ դրա համար ճանապարհ հարթել: Իր հանձնարարականներում Կոմիտեն կոչ է արել ավելի վճռակամորեն պայքարել մեր երկրում լայնորեն տարածված

գեներալային կարծրատիպերի դեմ, ուշադրությունը սրել է կնոջ նկատմամբ բռնության դեմ պայքարի հիմնախնդիր վրա, նշել այս ոլորտը կարգավորող հատուկ օրենսդրության բացակայությունը: **Լիլիթ Ջաքարյան**
Փորձագետ, ՀՀ ՊԱՄ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Կոմիտեն կոչ է արել ավելի վճռակամորեն պայքարել մեր երկրում լայնորեն տարածված գեներալային կարծրատիպերի դեմ, ուշադրությունը սրել է կնոջ նկատմամբ բռնության դեմ պայքարի հիմնախնդիր վրա, նշել այս ոլորտը կարգավորող հատուկ օրենսդրության բացակայությունը: **Լիլիթ Ջաքարյան**
Փորձագետ, ՀՀ ՊԱՄ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Կոմիտեի եզրափակիչ դիտարկումներին 43-րդ նստաշրջան, 2009 թ., 19 հունվարի-6 փետրվարի
Պատրաստեց Նորա Կանանովան

Ո՛չ բռնությանը

ՆԿԻՐՎԻՐ, ԳՈՐԾԻՐ, ՊԱՅՆՁԻՐ

Նվիրվոր կանանց նկատմամբ բռնության պայքարին, մի լռիկ դրա մասին և պահանջիր թո իրավունքները: Սհա այս կոչն էր որդեգրել «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» միջազգային քարոզարշավը այս տարի: Այն միավորում է 156 երկրների 2000 կազմակերպությունների, որոնք իրենց ջանքերն են ուղղում բռնության դեմ պայքարին:



Հիշեցնենք, որ 16-օրյակը սկսվում է նոյեմբերի 25-ից՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի միջազգային օրով և խորհրդանշորեն ավարտվում է դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների միջազգային օրը: Այս քարոզարշավի շրջանակներում նշվում է նաև դեկտեմբերի 1-ը՝ ՉԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը, դեկտեմբերի 2-ը՝ Ստրկության վերացման դեմ պայքարի միջազգային օրը և դեկտեմբերի 6-ը՝ «Սպիտակ ժապավենի» քարոզարշավ, որն առաջացավ ի պատասխան «Սոնրեալի սպանդի»:



Կա՞րոյոք վիճակագրություն Հայաստանում բռնության ենթարկված կանանց մասին: Հետազոտողները համախառն վկայաբանում են, որ դա «լուռի տարածք» է:

Ցավոք, այդպես է: Ու դա ևս հաստատում են մեր ծրագրի աջակցությամբ Ազգային վիճակագրական ծառայության այս տարի անցկացրած համահանրապետական հարցման մասին: Բնական արդյունքները: Ըստ այդ տվյալների հարցվածների 80%-ն իրենց հետ կատարված ընկալում է որպես բռնություն, բայց ընդամենը 15%-ն է պատրաստ դրա մասին խոսելու: Ընդ որում, ամենատարածվածը հոգեբանական բռնությունն է, որին հաջորդում են մյուս ձևերը՝ սեռական, ֆիզիկական, տնտեսական բռնություն:

Այս երևույթի գլխավոր հիմնախնդիրը լուռության մատնելն է: Ուստի բոլորը հիմքերը կան ենթադրելու, որ այն ավելի տարածված է, քան բռնության դեպքերի մասին ստացված հետազոտությունների տվյալները: Բանն այն է, որ բացի հարցաթերթիկներից կանայք կարող են իրենց դիրքորոշումն արտահայտել լացող, տխուր կամ ժպտացող դեմքով պատկերների ընտրությամբ: Արդյունքում՝ հարցվածների մեծ մասը, անկախ այն բանից, թե

Լռության փարածք

Հարցվածների 80%-ն իրենց հետ կատարված ընկալում է որպես բռնություն, բայց ընդամենը 15%-ն է պատրաստ դրա մասին խոսելու

Այս տարի «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» շրջանակներում Հայաստանում անցկացվեցին շուրջ 70 տարբեր միջոցառումներ թե մայրաքաղաքում և թե մարզերում: Դրանք կազմակերպվել էին մի քանի տասնյակ հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների, իշխանական կառույցների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Հայաստանում ՄԱԿ-ի առնվազն 5 գործակալություններ ակտիվորեն մասնակցեցին այս քարոզարշավի անցկացմանը: Այս մասին հայտնեց ՄԱԿ-ի բնակչության հիմնատրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար Ջինա Սարգիզովան, որն առաջին անգամ չէ համակարգում Հայաստանում 16-օրյակը: Առիթից օգտվելով՝ մենք դիմեցինք նրան խնդրելով պատասխանել մի քանի հարցերի:

Ինչ են պատասխանել հարցաթերթիկում, ընտրել էին լացող դեմքեր: Ու մեր մպատակն է ամեն ինչ անել, որ լացող դեմքերին փոխարինեն ժպտացողները: - Խնդիրն ի՞նչ չափով է վերաբերում երիտասարդությանը: - Հարցումն ընդգրկել է տարբեր տարիքային խմբեր, որոնցից մեկն էլ 19-24 տարեկան երիտասարդներն են: Ցավոք, թե՛ ընտանիքում և թե՛ գուցենկերների կողմից բռնության ենթարկվածների ամենաբարձր տոկոսը հենց այս խմբում արձանագրեցինք: Սակայն չի բացառվում, որ բարձր թվերը արդյունք են այն բանի, որ երիտասարդությունն ավելի է հակված անկեղծ խոսելու:

- Դուք մշեցիք տնտեսական բռնությունը, ինչպե՞ս է այն արտահայտվում: - Մենք դիտարկում ենք տնտեսական բռնությունը՝ որպես ներընտանեկան բռնության ձև, երբ կանայք զրկվում են որոշում կայացնելու իրավունքից՝ ընտանիքի եկամուտ հանդիսացող գումարի վերաբերյալ և շատ հաճախ զրկված են լինում ընդհանրապես գումարից: Այս երևույթի ակունքները թաքնված են ընտանիքում կանանց դերի ու աշխատանքի բաժանման մասին կարծրատիպային մոտեցումների մեջ: Կանայք հաճախ իրավունք ունեն որոշում կայացնել միայն այն փոքր դրամաբաժնի վերաբերյալ, որը նրանց տրվում է ամենօրյա, կենցաղային գնումներ կատարելու համար: Քիչ չեն դեպքերը, երբ կանանց, նույնիսկ կրթություն ու մասնագի-

տություն ունեցող, պարզապես արգելում են աշխատել՝ զրկելով նրանց աշխատանքի իրավունքից: Իսկ տանը կատարվող աշխատանքը, ինչպես հայտնի է, հասարակության կողմից որպես աշխատանք չի ընկալվում: - Համարվում է, որ բռնությանը նպաստում են աղքատությունը, երկրի տնտեսական վիճակը: - Իհարկե, տնտեսական իրավիճակը կարող է բռնության գործոն լինել, սակայն չի կարող բռնության միակ պատճառ լինել, քանի որ ֆինանսապես ապահով կինը նույնպես կարող է բռնության ենթարկվել: Բռնությունը գոյություն ունի բոլոր սոցիալական խմբերում անկախ եկամտի մակարդակից, կրթությունից, հասարակության մեջ զբաղեցրած դիրքից: Սա են վկայում նաև մեր անցկացրած հարցումները:

- Ասում են, որ այս ամենի մեղավորը ազգային ավանդույթներն են: - Չեն կարծում, թե կնոջ նկատմամբ բռնությունը մեր ազգային նկարագրի մաս է: Բացի այդ, ամեն ինչ բարդել ավանդույթների վրա՝ սա էլ յուրօրինակ կարծրատիպ է, որը հնարավորություն չի տալիս տեսնելու բռնության պատճառ հանդիսացող մյուս գործոնները: Ամեն դեպքում, մենք չենք փորձում կոտրել ավանդույթները, այլ կոչ ենք անում վերանայել այն մոտեցումները, որոնք անհարգաբարեկամ պատմեց են կնոջ կյանքի ճանապարհին:

Լիլիթ Քոչինյան

Տղամարդկանց ձայնը

Արսեն Ջուլֆալայանը՝ «Սպիտակ ժապավենի» դեսպան



Այս տարի Հայաստանում «Սպիտակ ժապավենի» դեսպան է ընտրվել 2009 թ. Եվրոպայի չեմպիոն, հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ Արսեն Ջուլֆալայանը:

Նրա մասնակցությամբ նկարահանված սոցիալական գովազդը «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի ընթացքում հեռարձակվել է մայրաքաղաքի երկու հեռուստատվիթերով, Երևանի մետրոպոլիտենում և հանրապետության մարզերում:

Ամեն տարի աշխարհի տարբեր երկրներում առավել հանրահայտ տղամարդիկ՝ մարզիկ, դերասան, քաղաքական գործիչ, դառնում են «Սպիտակ ժապավենի» դեսպան և այդպիսով արտահայտում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում իրենց համերաշխությունը:

Ի պատասխան «Սոնրեալի սպանդի»

«Եթե դա երկրների միջև լիներ, մենք այն պատերազմ կկոչեինք: Եթե հիվանդություն համաճարակ է՝ եթե մարդի արտահոսք՝ աղետ: Սակայն դա կատարվում է կանանց հետ և ամեն օր: Սա բռնություն է կանանց նկատմամբ...»:

Այս բառերը պատկանում են «Սպիտակ ժապավեն» ընկերության հիմնադիրներից մեկին՝ Մայքլ Կաուֆմանին, որը միավորում է կանանց նկատմամբ բռնության դեմ հանդես եկող տղամարդանց: Այս նախաձեռնությունը կանադացի տղամարդկանց յուրօրինակ պատասխանն էր 1989-ի դեկտեմբերի 6-ին կատարվածին, երբ Սոնրեալի ինժեներական դպրոցի շենք մտած 25-ամյա Սարկ Լեպինը սառնարտորեն կրակեց 14 ուսանողուհիների, որոնց մեղքը, նրա կարծիքով, այն էր, որ կանայք իրավունք չունեն ինժեներ դառնալու, ու նրանց պատճառով իրեն չէին ընդունել ինժեներական դպրոց:

Տղամարդ առաջնորդների ցանց

«Մենք պետք է միավորվենք: Ո՛չ մի քաղաքական առաջնորդ և ո՛չ մի կառավարություն չեն կարող համակերպվել կանանց նկատմամբ բռնության հետ ինչ ձևով էլ և ինչ հանգամանքներում ու պայմաններում էլ այն լինի»:

Այս տարի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հայտարարեց «տղամարդ առաջնորդների ցանցի» ստեղծման մասին՝ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի համար: Սա 2008 թ. փետրվարին նրա հռչակած «Համատեղ ուժերով վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը» քարոզարշավի մի մասն է, որը նախատեսված է մի քանի տարվա համար և ուղղված է ողջ աշխարհում կանանց ու աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելմանն ու վերացմանը:

SOS

Յուրաքանչյուր երրորդը

Նոյեմբերի 25-ին նշվում է Կանանց նկատմամբ բռնության վերացման պայքարի միջազգային օրը:

- ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամի տվյալներով՝ յուրաքանչյուր երրորդ կին կյանքում գոնե մեկ անգամ դառնում է ծեփի, բռնաբարության կամ այլ կոպիտ վերաբերմունքի զոհ:

- Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ աշխարհում ամեն տարի 5 հազար կին դառնում է սպանությունների զոհ, որոնք կատարում են ընտանիքի անդամները «հանուն պատվի»:

- Ըստ 11 երկրներում ԱՅԿ-ի անցկացրած ամենամյա հետազոտության տվյալների՝ պարզվել է, որ գուցենկերների կողմից սեռական բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը գտնվում է ճապոնիայում 6%-ի մինչև Եթովպիայում 59%-ի սահմաններում:

No comment

«Կինս մինչև օրս չի ներել ինձ դրա համար»...

Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց նկատմամբ բռնությանը: Այս հարցը մենք ուղղեցինք բացառապես տղամարդկանց: Թե որքանով են մեր գրուցակիցներն անկեղծ եղել՝ դատե՛ք ինքները...



Լուսանկարը՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի

«Բռնությունն ընդհանրապես վատ բան աս, կարծում եմ՝ նորմալ մարդը չի խփի, կբացատրի, եթե իհարկե դիմացինն էլ աս նորմալ մարդ, ասում է 56-ամյա Հայկ Ասատուրյանը, ով խոստովանում է, որ թեև հազվադեպ, բայց բռնացել է կնոջ նկատմամբ: - Են ժամանակ ջահել էինք, նոր էինք ամուսնացել, ամեն օր ուզում էր գնար հոր տուն, ես էլ չէի թողում, որպեսզի սովորեր մեր տանը, առանց մոր ապրեր»:

31-ամյա Գուրգեն Միսաքյանը կարծում է, որ բռնություն անհրաժեշտ է կիրառել միայն այն դեպքում, երբ կինն ինքն է թույլ տալիս: «Ընենց աղջիկներ կան, որ իրանց հետ ուրիշ ձև չեն կարա, իրանք են ստիպում, որ գոռաս կամ խփես, ես կյանքում չեմ տեսել, որ նորմալ աղջկա վրա տղան ձեռ բարձրացնի», - ասում է Գուրգենը:

19-ամյա Արշակն իր ընկերուհուն արգելում է կարճ փեշ հագնել, սակայն դա բռնություն չի համարում. «Ինքը կարող աս չի հասկանում ու կարճ շոր աս հագնում, բայց ես իրան բացատրում եմ, որ մարդիկ սխալ կարծիք կկազմեն իրա մասին, դրա համար էլ չեմ թողում, որ հագնի: Ես իրան չեմ ստիպում, բայց ասում եմ, եթե նորից կարճ հագնես, քեզ կթողեն», - ասում է Արշակը:

42-ամյա Հայկ Մուսիսյանը տարօրինակ համարեց, որ լրագրողը նման հարցերով անհանգստացնում է քաղաքացիներին. «Կա բնության օրենք. ուժեղի մոտ միշտ էլ թույլն աս մեղավոր, բնությունից կինը տղամարդուց թույլ է, դրա համար էլ բռնության է ենթարկվում, տղամարդն ի՞նչ մեղք ունի, որ կինը թույլ է, բնությունն է մեղավոր», - կատակում է Հայկը:

26-ամյա Սարգիս Սարուխանյանը կարծում է, որ բռնությունը միայն ֆիզիկական է լինում. «Ես դեմ եմ ուժի կիրառմանը, դրանով չեն կարող կնոջը ոչինչ ստիպել, դա կարող է անկանխատեսելի հետևանքների բերել: Ես իմ կնոջը բացատրում, համոզում եմ, երբեմն գոռում եմ վրեն, բայց երբեք չեմ խփում»:

րող է անկանխատեսելի հետևանքների բերել: Ես իմ կնոջը բացատրում, համոզում եմ, երբեմն գոռում եմ վրեն, բայց երբեք չեմ խփում»:

49-ամյա Սամվելը գրույցի ընթացքում խոստովանեց, որ երիտասարդ տարիքում երբեմն ֆիզիկական բռնությունների է ենթարկել կնոջը, սակայն հիմա զղջում է դրա համար: «Են ժամանակ ջահել էի, խնում էի, հիմարություններ էի անում, հիմա զգում եմ, որ կինս մինչև օրս չի ներել ինձ դրա համար: Ձահելներին խորհուրդ եմ տալիս, որ սիրալիր վարվեն գեղեցիկ սեռի հետ», - ասում է Սամվելը:

21-ամյա Արսեն Եղիազարյանը կարծում է, որ հիմնականում թույլ ու չկայացած տղամարդիկ են բռնանում կնոջ նկատմամբ: «Հատկապես նրանք, ովքեր դրսում որպես տղամարդ չեն կայանում, փորձում են տանը ցույց տալ իրենց ուժը: Ես գտնում եմ, որ դա սրիկայություն է, թույլ կնոջը ցանկացած տղամարդ կարող է ծեփել, սակայն իսկական տղամարդը նման բան չի անում», - ասում է ապագա դերասանը: Սակայն նույնիսկ նա է խոստովանում, որ պատանի հասակում բռնացել է քրոջ նկատմամբ: «Առաջ բակի տղաների ազդեցության տակ քրոջս արգելում էի ուշ ժամին տնից դուրս գալ, նույնիսկ մի անգամ ապտակել եմ, բայց ես ինքս էլ այդ ժամանակ կայացած չէի, երբ հասունացա, ներդրություն խնդրեցի նրանից»:

Ջրուցեց Արման Դարիբյանը

Շուկ համբերություն

«Ախր, ո՞ւմ ինչ գործն է, ամուսիններ են, կվիճեն էլ, կհաշտվեն էլ...»

Գյուղում, որտեղ ապրում են Դոնիսիաներ և Դարուքը, բոլորը գիտեն՝ եթե ամուսինը խնամ է, ապա կինը պետք է ծեծվի և այն էլ փողոցում՝ բոլորի աչքի առաջ: Սա կարծես գյուղացիների համար յուրօրինակ թամաշա է դարձել. բոլորը տեսնում են, քննարկում տեսածի մանրամասները, սակայն ոչ ոք չի խառնվում. ախր, ո՞ւմ ինչ գործն է, ամուսիններ են, կվիճեն էլ, կհաշտվեն էլ:

Ես բազմիցս էի լսել Դոնիսիաների մասին, սակայն նրան տեսնում էի առաջին անգամ: «Նա ինչպես միշտ խնամ էր,- պատմում է Դոնիսիաներ,- և ինչպես միշտ նրան ոչ մի պատճառ պետք չէր, բավական էր, որ ես տանն էի ու դժգոհ, որ նա նորից խնամ էր»:

«Վիրավորանքի» պատմախառնը չուշացավ. մի քանի օր անց կողմն, և նա պատուհանի տակ էր ընկած: Դաշտը, որ արեց ամուսինը, գրպանից հանեց դանակը և հարձակվեց կնոջ վրա: Դոնիսիաներ ուրիշ ելք չգտնելով՝ պատուհանից դուրս թռավ և վազեց դեպի մոտակա ձորակը՝ ձեռքերի և ոտքերի արյունը վրանալու: Ցավից և ցրտից դողալով՝ երկար ժամանակ ոչինչ չէր կարողանում ասել, միայն անպաշտպան երեխայի նման լաց էր լինում: Մեծ դժվարությամբ կարողացանք նրան համոզել և ներս տանել վերքերը մշակելու համար: Շարունակ վախճանում էր, որ ամուսինը կհանա, հետո էլ ամաչում էր՝ անծանոթ մարդիկ կային: Մի ժամից, երբ նա արդեն հանգստացել էր և կաղալով տուն էր գնում, հարևան բակում հավաքված տղաներից մեկը ծիծաղելով բղավեց նրա հետևից. «Ռիստ, էսօր իսկական բակիկ էր: Սպաղեց, սկի Վան Դանը ըտենց տրյուկ չէր կարա աներ»:

Ամեն անգամ գյուղ գնալիս միշտ հիշում էի 26-ամյա Դոնիսիաներին, ով սակայն 40-ն անց կնոջ տեսք ունի, և նրա երեք չար տղաներին, որոնց մասին գյուղում արհամարհանքով և չարությամբ ասում են, որ նրանք այնքան ճարակի են, որ երեքը չեն կորչի:



Կանանց ռեսուրսային կենտրոնի թեժ գիծ՝ 0800 01 280

Նրան մեկ անգամ էլ այս տարվա ամառը տեսա, նորից աչքի տակ կապույտ էր: Փողոցով անցնող կինը, առանց նրան բարևելու, հեզանքով և դիտավորյալ շատ բարձր ծայրով ասաց. «Դ՞ր, Ռիստ, էս էլի կորեղո մի լավ լղկել ա»:

Դոնիսիաներ այս գյուղում միակը չէ, ով բռնության

է ենթարկվում հարբած ամուսնու կողմից: Սակայն զարմանալի է նրա համազուգահեռների և հարևանների վերաբերմունքը. նրանք ոչ միայն չեն կարեկցում առանց այն էլ դժբախտ կնոջը, այլև հակառակը՝ ծաղրում և էլ ավելի են նվաստացնում նրան:

Ինչո՞ւ է հասարակությունն այդքան դաժան Ռիսիսիաների համար: Ես հարցի պատասխանը ստանալու համար դիմեցի հոգեբանների օգնությանը:

«Բացատրություններից մեկն այն է, որ շատ ընտանիքներում կա բռնություն, սակայն այդքան հրապարակային չէ: Կանայք, որոնք նույնպես բռնության են ենթարկվում, փորձում են պաշտպանվել՝ արժեզրկելով երևույթը, միայն թե չխոստովանեն հանրության առջև իրենց հետ կատարված նվաստացման մասին: Ծաղրելով Դոնիսիաներին՝ նրանք կարծես իրենց ավելի արժանապատիվ, ավելի բարձր են զգում,- կարծում է հոգեբան Սարիաննա Արվյանը՝ ուշադրություն դարձնելով նման ընտանիքներում երեխաների դաստիարակության խնդրին: Այն ընտանիքներում, որտեղ բռնություն կա, երեխաները կամ զոհի բարոյք են ծնոք բերում, կամ բռնարար դառնում, ասում է նա:

«Կանանց ռեսուրսային կենտրոնի» ծրագրերի համակարգող, հոգեբան Տաթև Աղաբեկյանը աշխատանքի բերումով կանանց հանդեպ դաժան վերաբերմունքի դեպքերի շատ է հանդիպել: Ըստ նրա՝ 10-ից 7 դեպքը ծայրաստիճան դաժան են: Նա նշեց, որ շատ հաճախ կանայք տարիներով ապրում են բռնության մեջ միայն իրենց երեխաների համար, իրենց մասին ընդհանրապես չմտածելով: Եվ թե քաղաքում բռնության ենթարկվող հնարավորություն ունի հեռախոսով զանգել իրենց կենտրոնի թեժ գիծ և պատմել իր խնդիրների մասին, ապա գյուղերում խնդիր բարդ է, քանի որ հեռախոսներն այստեղ հիմնականում փոստում են, և դժվար թե որևէ մեկը ցանկանա այդ խնդիր մասին հրապարակավ խոսել:

Կարինե Պետրոսյան

«Մահացա վեց տարի առաջ, երբ որդուս սիրտը կանգնեց»

35-ամյա Ալլա Մանուկյանն իրեն համարում է տգիտության ու գյուղական ավանդույթների զոհ: «Մահացա վեց տարի առաջ, երբ որդուս սիրտը կանգնեց: Նա կյանքից հեռացավ ուրիշների պատճառով, որովհետև գյուղում տգիտություն էր»,- պատմում է Ալլան:

Ալլայի կյանքը նման էր գյուղացի այլ աղջիկների կյանքին: «10-րդ դասարանում էի սովորում, երբ եկան ինձ ուզելու: Մի քանի ամիս անց ամուսնացա: 18 տարեկան էլ չկայի, երբ ինձ ասաց, որ մայրս ասում է: Զգիտեմ, թե այդ պահին ինչ էր մտածում, զգում: Ես էլ դեռ երեխա էի, չէի էլ հասկանում, թե հետո ինչ է կատարվում»:

Գյուղում կյանքն այնքան էլ հեշտ չէ, նշանակություն չունի, որ երիտասարդ հղի նորահարս ես: Ալլան էլ միանգամից լվիցեց աշխատանքի՝ կով կթել, գոմ մաքրել, հաց թխել: «Նոյեմբերի վերջին հղիության 5-րդ ամսում էի, երբ գնացիք դաշտ: Ցուրտ էր, ողջ օրն աշխատել էինք, ու երեկոյան ոտքով տուն եկանք: Դաշտից մինչև տուն սհազիմ երկար ծանապարհ էր, ես էլ քրտնած էի, երկու օր անց հիվանդացա, հազում էի, ծանր գրիպ տարա, ջերմությունն այնքան բարձր էր, որ զառանցում էի»,- պատմում է Ալլան:

Թեպետ հղիության շրջանում չի թուլատրվում

դեղ խմել, բայց ջերմությունն իջեցնելու համար բժիշկը ստիպված արևոցում կատարեց: «Դիտության ողջ ընթացքում դա իմ առաջին այցելությունն էր: Սկետուրս ասում էր, որ ինքն առանց բժշկի այցելության չորս զավակ է բերել, ես էլ կբերեմ»,- պատմում է Ալլան: Երկար գնումից հետո բժշկի եզրակացությունը հետևյալն էր. դեղերի ազդեցությունը պտղի վրա կարող է բացասական ազդեցություն թողնել, ու շատ հավանական է, որ փոքրիկը սրտի արատով ծնվի: «Բժիշկը նույնիսկ խորհուրդ տվեց պտղից հրաժարվել, բայց սկետուրս ու ամուսինս թույլ չտվեցին. ուզո՞ւմ են գյուղում խայտառակ լինես, ոչ մի ազդեցություն էլ չի թողնի, եղ ամենը դատարկ բաներ են»:

Ալլան պատմում է, որ վերջին չորս ամսվա ընթացքում անընդհատ սարսափ երազներ էր տեսնում: «Դիվանդանից ինձ տարան ավտոբուսով: Ցավից զայլարվում էի, դե, պատկերացրե՛ք՝ 17 տարի առաջ ինչ պայմաններ էին, սարսափելի: Զգիտեմ, չեմ էլ ուզում հիշել, թե ոնց հասա հիվանդանոց: Գուցե չափազանցում եմ, բայց ինձ թվում է՝ այդ ամենը ազդեց երեխայի առողջության վրա»,- ասում է նա:

Փոքրիկը 4 ամսական էր, երբ հիվանդացավ, ու հայտնվեցին առաջին ախտանշանները. Նարեկը ծնվել էր սրտի արատով: «Մի քանի անգամ երեխայիս վիրահատեցին: 90-ականներին դժվար էր նման ծանր հիվանդությանը երեխայի խնամել: Տան պա-

մաններն այն չէին, ու փոքրիկին մի կերպ էի պահում: Դաժախ ինձ անգամ տարրական իրեր չէի գնում, որ փոքրիկիս ուտելիք, դեղորայք առնեմ: Ինձ զարմացնում էր տնեցիների վերաբերմունքը. նրանք թվում էր, թե սրտի արատն այնքան էլ լուրջ հիվանդություն չէ: Տան ընդամենը մի սենյակն էինք ջեռուցում, ու երեխան գրեթե միշտ հիվանդ էր, անընդհատ հազում էր: Բժիշկները հույս չէին տալիս, բայց ես չէի համձմվում»:

Աղոց վեց տարի՝ Ալլան միայն սև է հագնում, ասում է՝ որդու մահից հետո իր կյանքն անհիմաստ դարձավ: Ամեն առավոտ նախ գնում է որդուն այցելության, հետո՝ աշխատանքի: «Դժվար է ապրել, երբ քո մասնիկն է մահացել է: Ամեն անգամ, երբ կյանքից որևէ հաճույք եմ տանում, երբ ինչ-որ լավ բան է կատարվում, նրա առաջ մեղավոր եմ զգում: Սկզբում բոլորին մեղադրում էի փոքրիկիս մահվան մեջ, չէի կարողանում սկեսուրիս հետ նույն տանն ապրել, բայց հետո հասկացա, որ ոչ ոք էլ մեղավոր չէ: Սկեսուրս էլ չէր ուզում, որ այդպիսի բան լիներ, պարզապես այստեղ պայտեմական աղաքներն ուրիշ են, դրա հետ չի կարելի հաշտվել, բայց ընդզվեց էլ հնարավոր չէ, որովհետև մարդկանց մեջ դա նստած է: Իմ որդին էլ դարձավ այդ սնտիսպաշտության զոհը»,- ասում է Ալլան:

Դասմիկ Գարությունյան

Անդրադարձ

«Կին» կինոփառատոն




Դեկտեմբերի 1-5-ը երևանում անցկացվեց արդեն ավանդական դարձած 6-րդ միջազգային «Կին» կինոփառատոնը:

Փառատոնի անունն ինքնին հուշում է, որ նրա շրջանակներում ներկայացվում են կին ռեժիսորների ու կանանց մասին պատմող ֆիլմեր: Այն նպատակ ունի վերահիմնաստավորելու կնոջ տեղը և դերը հասարակության մեջ, կինոյի միջոցով լուսաբանելու նրա խնդիրները: Այս տարի փառատոնում ներկայացվել էին 18 երկրի 82 ֆիլմեր:

«Լավագույն ֆիլմ» անվանակարգում մրցանակի արժանացավ Իզաբել Զուկոյի (Լեհաստան) «Դուստրի համակարգ», իսկ հատուկ մրցանակ Օլգա Մաուրիանայի (Ռուսաստան) «Զորեքաբքի կայարանում» ֆիլմը: Փառատոնի ավարտին շնորհվել են նաև մի քանի դիպլոմներ:

Փառատոնի կազմակերպիչն է «Լիզա» հիմնադրամը՝ Փառատոնի կայքը՝ <http://kin-festival.liza.am>

Սպիտակ ժապավեններ «հոգու կապտուկների» վրա



«Հոգու կապտուկներ»՝ ներկայացումը, որի առաջնությունը տեղի ունեցավ Մոյսեբեկի 25-ին Երևանի տիկնիկային թատրոնի բեմահարթակում, բեմադրել է Կանանց իրավունքների կենտրոնը:

Ինչպես մեզ պատմեց կենտրոնի տնօրեն Սուսաննա Վարդանյանը, այն հիմնված է բռնության ենթարկված կանանց կյանքի իրական պատմությունների վրա: Քարոզարշավի կազմակերպիչները ներկայացնում այցելուներին բաժանում էին սպիտակ ժապավեններ՝ որպես բռնության հետ անհամաձայնության խորհրդանիշ:

Կանանց իրավունքների կենտրոնի թեժ գիծ՝ 54 28 28

Global Fund for Women logo and text: Զավեցվածքը հրատարակվում է Կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ. հմնադիր՝ Թամար Գովաթայան Զևակունը՝ Վահե Դիոնեյանի. Տպագրանակ՝ 6000

Ճեղքել լույսը

Եթե ես լռեի, դրանով կմասնակցեի բռնությանը...

Երիտասարդ ակտիվիստ Մարիամ Սուխուրյանի պատմությունը շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում: Այն սկսվել էր 2008 թ., ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «10 լավագույն դպրոցներ» ծրագրի շրջանակներում, երբ Մարիամ Սուխուրյանը և նրա ընկերներն աշխատում էին Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցում: Աշակերտուհիները նրանց պատմեցին, որ հայոց լեզվի ուսուցիչ Լևոն Ավագյանը սեռական ոտնձգությունների է ենթարկել իրենց: «Փոքրիկ աղջիկները մեզ վստահել և պատմել էին այդ խայտառակ դեպքերը և նրանք ակնկալում էին մեր օգնությունը, մենք չէինք կարող լռել»,- ասում է Մարիամը, որն այդ մասին պատմել է լրատվամիջոցներին:

Հանրային հեռուստատեսությունը տեսանյութեր էր հեռարձակել, որոնցում դպրոցի նախկին սաները պատմում էին, թե ուսուցիչն ինչպես էր իրենց կանչում իր սենյակ, հրում պատի մոտ և համբուրում... Եթե իրից հետո երեքուկու քննչական վարչությունում մյուսեր նախապատրաստվեցին ուսուցչի նկատմամբ քրեական գործ հարուցելու համար: Սակայն Լևոն Ավագյանը դիմում ներկայացրեց ոստիկանություն, թե աշակերտուհին Հանրային հեռուստատեսության էթերից գրաբարտել է իրեն: Արդյունքում՝ այս տարվա վերջերս Մարիամը

սուտ մատուցում մեղադրանք է առաջադրվել Մարիամ Սուխուրյանին, որի միջոցով ուսուցչի անառակաբար գործողությունները հայտնի էին դարձել հանրությանը: «Ակնհայտ է, որ այսպիսով փորձում են մեզ լռեցնել: Մենք նրանց հայտնում ենք, որ երեխաների նկատմամբ նման բան է կատարվել, իսկ նրանք ուսուցչին պատժելու փոխարեն ինձ են մեղադրում»,- ասում է 29-ամյա Մարիամը:

Նրան առաջադրված մեղադրանքը հոկտեմբերին փոխվեց՝ «սուտ մատուցությունից» վերածվելով «գրաբարտության»: Քննիչները գտնում են, որ Մարիամն աշակերտուհուն սովորեցրել է սուտ տեղեկություններ տարածել ուսուցչի մասին, որովհետև դպրոցի նախկին սաներից մեկը նման ցուցմունք է տվել: Սակայն, բացի նրանից, ևս 3 նախկին սաներ քննիչներին պատմել են ուսուցիչ Լևոն Ավագյանի կողմից իրականացված սեռական գործողությունների մասին: «Եթե նրանք պնդում են, թե ես եմ սովորեցրել աշակերտուհիներին մեկնել, այդ դեպքում ինչո՞ւ եմ մյուս աղջիկները ես նույն ուսուցչի անունը տալիս, ես այդ աշակերտուհիներին չեմ ճանաչում»,- պաշտպանվում է Մարիամը:

Երիտասարդ ակտիվիստի դեմ հարուցված մեղադրանքը մեծ աղմուկ է բարձրացրել մամուլում բազմաթիվ հրապարակումներ են եղել այդ

մասին, մի շարք կազմակերպություններ կոչ են արել իրավապահներին դադարեցնել քրեական հետապնդումը Մարիամի նկատմամբ: Ներկայումս երեքուկու քննչական վարչությունը վերսկսել է գործի նախաքննությունը, հարցաքննում են գործի վկաներին ու մեղադրվող Մարիամ Սուխուրյանին:

Ըստ էության, բռնությունների մասին բարձրաձայնողն է այժմ դարձել բռնության զոհ: «Օգոստոսի 15-ից իմ նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել քաղաքից չհեռանալու մասին ստորագրությունը: Ես բնապահական եմ, շարունակ արշավների եմ գնում, սակայն ամիսներ շարունակ խոչընդոտում եմ իմ ազատ տեղաշարժվելու իրավունքը, այն դեպքում, երբ իրական մեղավորներն ազատության մեջ են»,- իր դժգոհությունն է հայտնում Մարիամը:

Զնայած այս ամենին՝ երիտասարդ աղջիկը չի զղջում, որ երեխաների բողոքը հասցրել է լայն հանրությանը: «Եթե ես լռեի, դրանով կմասնակցեի երեխաների նկատմամբ բռնություններին: Ուստի ես չեմ հուսահատվում և շարունակելու եմ պայքարել համուն արդարության, քանի որ համոզված եմ, որ մեղավորը չի կարող անպատիժ մնալ»,- ասում է Մարիամը:

Արման Ղարիբյան